

րազնդից մէջ այլ կային քրիստոնեայ Հայք. և այս այլ ոչ փոքր տոժիթ մ'եղած է, մանաւանդ յետ կոփանաց Գաժանին, Հոռմէա-կան վարչութեան կերպ մի յեղափոխութեան և ետք կենալու յաշխարհակալութենէ, Գու-ցէ այս ըսածս ոմանց աղգասիրական եռանդն և պարծենկոտութիւն երեւի. այլ դարձեալ պնդեմ, թէ, ոչ բաւական նկատուած այլ նկա-տելի կիտ մ'է այս, յեկեղեցական և քաղա-

քական պատմութեան Հռովմայեցւոց ժա-մանակին... Թէ, Տրդատայ անկախ և ազա-տօրէն վարուիչն՝ անոնց վարչութեան կշիռքը չեղեց չփոխեց. իսկ երբ Կոստանդիանոս միապետեց և քաղաքավարութիւնը լծորդեց քրիստոնէական կրօնից՝ բոլորովին կերպա-բանափոխ եղաւ տիրապետութեան օրէնքն և կերպն:

Շարայաբեղի


Հ. Ղ. Վ. Մ. ԱԼԵԿԱՆ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՂԲԵՐԱՅ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ե Ի

Պ. Մ. Ն. ՄԱՌԻ ՄԻ ԿԱՐԾԻՔԸ

Ա. — «Վարք Որդոց և Թոռանց Ս. Գրիգորի»:



ՈՓԵՐԱՅ Ի. Հատորին 47-56 էջերը կը գրուէ գրութիւն մ'այս խորագրաւ. «Պատմութիւն վարուց և նահատակութեանց երջանիկ Հայրապետացն Արիս-տակիսի, Վրթանիսի, Յուսկանի, Գրիգորիսի, որդոց և թոռանց որոյն Գրի-գորի»:

Այս գրութիւնը իսկոյն ընթերցողին հետաքրքրութիւնը պիտի շարժէ, այնու՝ որ յան-կարծական վերջաւորութիւն մ'ունի, և ոչինչ չէ նշանակուած հեղինակին և ժամանա-կին նկատմամբ:

Յայտ է թէ ո՞ր և է քննութեան մէջ զատուք գտնելու համար սրշափ կարեւոր է քննել գրութեան մ'ազդիւրները: — Արդ՝ այս գրութիւնն ուրիշ բան չէ բայց եթէ հա-տուած մը Յովհան կաթողիկոսի պատմութեան, ինչպէս պիտի ցուցնեմ այժմ ներկայ համեմատութեամբ:

ՎԱՐՔ ՈՐԻՒՈՆ ԵՒ ԹՈՒՆԱՆ

ՅՈՎՀ. - ԿԱԹՈՂԻԿՈՍ

Արդ յեօթն և ի տասներորդ ամի ար-քայութեան Տրդատայ՝ նստաւ յաթոռ սրբոց առաքելոցն Բարթողիմէոսի և Թադէոսի, սրբութեանցն գտեալ քահանայագործող և ծնող մեր ըստ աւետարանին և նախահայր աստանօր արտադրելով. Յետ այսորիկ ապա գնացեալ եւս ընդ արքային Տրդատայ յառ-տուածակարգ կայսրն Կոստանդիանոս բազ-մօք իմն Խնազելի և վայելուչ մեծարանօք պատուէ զսուրբ Հայրապետն իբրեւ զկենդա-

Արդ յեօթն և ի տասն ամի արքայու-թեան Տրդատայ՝ նստաւ յաթոռ սրբոց ա-ռաքելոցն Բարթողիմէոսի և Թադէոսի, սրբ-րութեանցն գտեալ քահանայագործող և ծնող մեր ըստ աւետարանին և նախահայր աս-տանօր արտադրելով. Յետ այսորիկ ապա գնացեալ եւս ընդ արքային Տրդատայ յառ-տուածակարգ կայսրն Կոստանդիանոս բազ-մօք իմն և վայելուչ մեծարանօք պատուէ զսուրբ Հայրապետն իբրեւ զկենդանի մար-

ՎԱՐՔ ՈՐԴՈՑ ԵՒ ԹՈՒԱՆՑ

ՅՈՎ.Հ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

նի մարտիրոս առաջի անկանելով և ազօթս նուիրականս և օրհնութիւնս ի նմանէ Հայցելով, և այսպէս զնա պատուաւորեալ և Տրդատա հանդերձ Հանեալ յոսկրապատ կառո, մեծաւ շքեղութեամբ յուզարկէ զճանապարհայն:

տիրոս առաջի անկանելով, և ազօթս նուիրականս և օրհնութիւնս ի նմանէ Հայցելով, և այսպէս զնա պատուաւորեալ, և Տրդատա Հանեալ յոսկրապատ կառո, մեծաւ շքեղութեամբ յուզարկէ զճանապարհայն:

Աւելորդ է Համեմատութիւնը շարունակել:

Ճիշդ այսպէս բաւ առ բաւ, մինչեւ վերջ, Յոհան Կարդղիկոսէ օրինակուած է Թոսանց վարքը:

Ընթերցւածոց շնչին տարբերութիւններէն յիշենք Հետաքրքրականները միայն:

ՎԱՐՔ ԹՈՒԱՆՑ

Յ. ԿԱԹ.

Իսկապէս լինի ժողով եպիսկոպոսաց: Ոխերիմ մտօք սպանանէ զուրբն: Բերելով զքսան կանոնեալ գլուխ ժողովոյն: Հրացայտ ցլմունք ի վայր հոսեալ: Տրդատ յանհամբարիցն բարոյ և յանհազանդից ճմարտութեանն խարդաւանեալ:

Իսկ ապա լինի ժողով եպիսկոպոսաց: Ոխարտ իմ մտօք սպանանէ զուրբն: Բերելով զքսանական գլուխ ժողովոյն: Հրացայտ ցլմունք ի վերայ հասեալ: Տրդատ յանհամբարիցն բարոյ և յանհազանդից ճմարտութեանն խարդաւանեալ:

Դիւրին և ուղիղն որոշել, վերջին օրինակին մէջ երկուքն ալ կը սխալին. պէտք է կարգաւ. «Տրդատ յանհամբարիցն բարոյ (= բարի բանի չամբերող) և յանհազանդից ճմարտութեանն խարդաւանեալ»:

Բ. — «Վարք Սրբոյն Սահակայ և Մեսրոբայ»:

Ոսկերաց Ա Հատորին 5-42 էջերը կը գրաւէ գրութիւն մի այս խորագրաւ. «Պատմութիւն վասն Սրբոյն Սահակայ Հայրապետին և Մեսրոբայ վարդապետին»: Հոս ճշխարհանութիւնը անտես ընել առւած է¹ յետնադարեան ըլլալուն բազմաթիւ նշաններ: Այս գրութիւնն ալ, ինչպէս դիտուած է արդէն, անեղած է Յովն. Կարդղիկոսէ, բայց հոս խմբագրողը բրած է բազմաթիւ յաւելումներ: Հիմնական ըլլալու համար կը գնեմ օրինակ մ'ալ ասոր:

ՎԱՐՔ ՅԱՆԱԿ. ԵՒ ՄԵՍՐ.

ՅՈՎ.Հ. ԿԱԹ.

Յետ ամաց հնգից վախճանի Հայրապետն մեծ Աստուրակէս, և յաջորդէ զաթոռ պատրիարքութեանն սուրբն Սահակ որդի Մեծին Ներսիսի և վասն զի սասուգապէս ու գոյով ծնունդ առաքինութեան, յիրաւի սպա զհետ

Յետ այսորիկ ապա վախճանեալ Հայրապետն մեծ Աստուրակէս, որ կայառ զարոռ հայրապետոսեանն զամս հինգ, ի տեղի նորա յաջորդէ արքայ Խոսրոպ զՍահակ որդի մեծին Ներսիսի. և վասն զի սա սասուգապէս

¹ Ագաթ. և Խոբ բազմ. գաղտնիքը էջ 174, կ'ըսէ. «Հեղինակ եթէ Սկեւուսցիէն համարենք և եթէ ոմն ի քարգունակաց»:

ՎԱՐՔ ՍԱՀԱԿ՝ ԵՒ ՄԵՍԲ.

ՅՈՎՀ. ԿԱԹ.

սորա ընթանայր սուրբ և արդար վաստա-
կոց հանդէսը.

որ յաշխարհի գոլով և իբրեւ զանապա-
տաւորս ամենայն հեղանայ հանդիսիւ, ընդ
կարգս աշխարհիս անցանէր մշտնջենամուռնչ
աղօթիւք, հանդերձ իւրօքն աշակերտելօք կա-
տարեալ զպաշտօն բարեկարգութեանն:

զոլով ծնունդ տառքնութեան՝ յիբաւի ապա
զհետ սորա ընթանայր սուրբ և արդար վաս-
տակոց հանդէսը.

որ յաշխարհի գոլով և իբրեւ զանապա-
տաւորս ամենայն հեղանայ հանդիսիւ ընդ
կարգս աշխարհի անցանէր մշտնջենամուռնչ
աղօթիւք, հանդերձ իւրովք աշակերտօքն կա-
տարեալ զպաշտօն բարեկարգութեանն:

Գ. — «Վարք Սրբոյն Ներսիսի»:

Թոռանց վարքը և Ս. Սահակայ և Մեսրոպայ պատմութիւնը պէտք են իրարու
հետ անձնայ աղերս մուծենալ. երկուքն ալ կը վերաբերին Լուսավորչի առհմին պատ-
մութեան, և երկուքն ալ առնուած են Յովհանն Կաթողիկոսէ. — Այս պատմաագրաւոր-
ութեամբ զուշակած էի արդէն թէ կայ Հայերէն Պատմութիւն մը Ս. Ներսիսի, (Ս. Ներսէս
Այիշուհի բնաւ առաջին երկու գրութեանց մէջ), որ կը միացնէր, կը զօղէր երկու վե-
րոյշուհի պատմութիւնները, և պէտք էր նոյնպէս Յովհաննէս Կաթողիկոսէն առնուած ըլլալ:
Այս պատմութիւնը գտայ յիրաւի՝ Սոփեբաց Է. Հատորին մէջ: Իւր վերնագիրն է.
«Յաղագս Հայրապետութեան Սրբոյն Ներսիսի և Հաստատելոյ զաթոռ պատրիարքութեան
որպէս այլոց պատրիարգաց»:

Բայց հոս հրատարակչին ալ կ'անդրադառնայ, թէ «Սկսանի խմբագրող պատ-
մութեանս զաղափարել ի Յովհաննէ Կաթողիկոսէ¹»։ Միայն իւր անդրադարձած նմա-
նութեանց վրայ պէտք է յաւելույ հրեք հաստ ալ²։ յորոց է նաեւ առաջին մասն
ներկայ Համեմատութեանս:

ՎԱՐՔ Ս. ՆԵՐՍԻՍԻ

ՅՈՎՀ. ԿԱԹ.

Արշակ արքայ Հայոց որդի Տիրանայ
կուրացելոյ ըստ արժանին ի Պարսից ար-
քայէ, առաքէ մեծաւ պատուով զՆերսէս
որդի Աթանազիսի որդւոյ Յուսկան, (որդւոյ
Վրթանիսի որդւոյ Սրբոյն Գրիգորի) ըստ ա-
ռաջնոյ կարգին ի Կեսարիա ձեռնադրել ի
Հայրապետութիւն Հայոց մեծացս...

Որ և սքանչելի իմն նշանք պատմի լեալ,
զի մինչդեռ կայր ընդ բեմականան ի ձեռ-
նադրութեան անդ, շնորհք Հոգւոյն Սրբոյ
աղանակեալ է վերայ գլխոյ նորա հանգաւ-
ցեալ, ի զարմացումն զբոլոր կղերիկոսս ե-
կեղեցւոյն ամեալ լինէր:

Ապա Արշակ որդի Տիրանայ կուրացելոյ
ըստ արժանին ի Պարսից արքայէ, առաքէ
զՆերսէս որդի Աթանազիսի որդւոյ Յուս-
կան

ըստ ա-

ռաջնոյ կարգին ի Կեսարիա ձեռնադրել ի
Հայրապետութիւն:

Որ և սքանչելի իմն նշանք պատմի լեալ,
զի մինչդեռ կայր ընդ բեմականան, ի ձեռ-
նադրութեան անդ, շնորհք Հոգւոյն Սրբոյ
աղանակեալ է վերայ գլխոյ նորա հանգաւ-
ցեալ, ի զարմացումն զբոլոր կղերիկոսս ա-
ծեալ լինէր:

1. Ծանօթ. էջ 79:

2. Աստիճ. էջ. «Արշակ... ի Հայրապետութիւն» (էջ 5), «Զկնի սորա... պատուեալ պա-
րիարքութեան» (էջ 27), «Եւ զկնի... գտեալ» (էջ 28):

Եւ այսպէս ապա լուսազարդեալ նորա ,
զայ հաստատէ գեղեցկապիր յարմարութեամբ
զբոլոր կարգս ուղղութեան , բարենախանձ
լինելով ի նախանձն հոգեւոր : Եւ նախ ա-
պա զամենայն անղթութեան արմատ խնեալ՝
փոխանակ ի ներքս ամէլ զողորմութիւն .
չինէ և աղքատանոցս առ ի մխիթարութիւն
վշտացեալ մարմնոց մարդկան . (և այլն) :

Եւ այսպէս ապա լուսազարդեալ նորա ,
զայ հաստատէ գեղեցկապիր յարմարութեամբ
զբոլոր կարգս ուղղութեան , բարենախանձ
լինելով ի նախանձն հոգեւոր : Եւ նախ ա-
պա զամենայն անղթութեան արմատ խնեալ՝
փոխանակ ի ներքս ամէլ զողորմութիւն .
չինէ և աղքատանոցս առ ի մխիթարութիւն վշտա-
ցեալ մարմնոց մարդկան . (և այլն) :

Դ. — Աղերս այս երեք գրութեանց :

Ս. Ներսիսի վարքը կը սկսի օրինակել ձեռք այն տեղէն՝ ոչ ոք աւարտեցաւ Թո-
սանց վարքը : Իսկ « Ս. Սահակայ և Մեսրոբայ պատմութիւնը » թէ ոչ բառացի՝ բայց
պատմական շարունակութիւնն է « Ս. Ներսիսի վարուց »¹ . աներկբայելի է ուրեմն թէ
այս երեք գրութեանց խմբագրողն ալ միեւնոյն անձն է , որ ուզած է Ս. Լուսաւորչայ
տոհմին պատմութիւնն ընել՝ Յովհաննէս Կաթողիկոսի Պատմութեանն քաղելով : Ասով
մեկնուած կ'ըլլայ « Թոսանց վարուց » յանկարծական վերջաւորութիւնը և « Ս. Ներսիսի
վարուց » յանկարծական սկզբնաւորութիւնը :

Բայց այս երեք գրութիւնները երբէք մի ամբողջութիւն կազմած չեն . « Ս. Սա-
հակայ և Ս. Մեսրոբայ պատմութիւնը » կը սկսի Ասպուրակէտէն , մինչ արդէն « Ս. Ներ-
սիսի վարքը » , — աւելի օրինակելով քան որչափ պէտք էր իրեն , — կը խօսի նաեւ Ասպու-
րակէտի , Սահակայ և Մեսրոբայ վրայ :

Խմբագրողը « Թոսանց վարուց » վրայ միայն եօթնուօրեան կանխաբան մ'աւել-
ցուցած է , միանեբուն՝ բազմաթիւ յաւելումներ , կարեւորը աջո՛ւն՝ որ տարբեր լեզու և ոճ մի
կը ներկայացնեն , որք մասնաւոր ի՛ր ընեն նոյն եռանկուն անձը , և յաճախ Յովհան Կաթողի-
կոսի խօսքերով պատմութեանն ընդլայնեալ կրկնութիւնն են . « Ս. Ներսիսի վարքը » ,
օրինակ իմն , յէջ 49 , զո՛չ չըլլալով Յո՛հ . Կաթողիկոսի Զիրաւայ պատերազմին բրած նկա-
րագրութեանն , զարձեալ կը սկսի . « Եւ եթէ խոնարհեցուցանէր զձեռն իւր յաղօթիցն ,
թաղաւորն Պապ » , և այլն :

« Ս. Ներսիսի » և « Ս. Սահակայ և Մեսրոբայ » վարքերը կը յանդիման այս խօսքե-
րով . « Վասն որոյ եկայք և մեք միաբան ժողովեալքս » կամ « Արդ եկայք և մեք միա-
բան ժողովեալքս ի սիշտակի տօնախմբութեան » , և այլն : Այս վերջաւորութիւնը յայտ-
նապէս ձառակաւն են :

Ե. — Գրութեանց ժամանակն և հեղինակը :

Այս գրութիւնը չեն կրնար գրուած ըլլալ յառաջ քան զՊատմութիւն Յովհան Կա-
թողիկոսի (+ 925) . վասնզի տարակոյս չի կրնար ըլլալ թէ « Ասոնք օրինակուած են Յովհան
Կաթողիկոսէ » , ինչպէս ցարդ կրկնեցինք , և ոչ թէ Յովհ . Կաթող . ասոնցմէ . վասնզի Կ .
Թովհ . Կաթողիկոսի յատուկ ոճն և լեզուն ունին՝ ցորչափ անոր հետ կը գոգընբանան .

¹ Գիտութիւն Նաեւ « Ս. Ներսիսի վարուց » և « Ս. Սահակայ և Մեսրոբայ պատմութեան »
վերջաւորութեանն նմանութիւնը . (Սփեքք Է , 25-26 . և Սփեքք Ա , 37-38) :

2. Պատմութեան կրկնութիւնը անկից միայն յառաջ գալ կրնան, որ ասոնց գրողը՝ կ'օրինակէ ոչ թէ կը շարադրէ. 3. «Ս. Ներսիսի Վարուց» մէջ այս գրութեանց խմբագրողն անձամբ կը վկայէ, թէ ինքն է րանադարն. «Էւ յայտոց պատմագրաց ասի ե այն ինչ», կ'ըսէ նա յէջ 13, մինչ զետ ոչ մէկ պատմիչ յիշատակած է. և յիրարի ճիշդ այն տեղ կը գաղբի պահ մը Յովհ. կաթ. օրինակելէ, «յայտոց պատմագրաց» քաղելու համար (մինչեւ 15 էջ, ց«ապա ճաշակեր»)։ 4. Յանկարծական սկզբնաւորութիւնը և վերջաւորութիւնը կը ցուցնեն թէ այս երեք գրութիւնք երբեք սկզբնագիր չեն կրնար բլլալ, մինչ կարգաւորեալ շարադրութիւն մը կը տեսնենք Յովհ. կաթողիկոսի պատմութեան մէջ։

Բայց պէտք ենք աւելի յետ մղել այս գրութեանց ժամանակը։ Վարք Ս. Ներսիսի» կ'ըսէ յէջ 26. «Սա բազում բանս խօսեցեալ առ ի յօգուտ լսողաց՝ վասն ազգին Նեւտողաց, և վասն որդւոյն կորստեան և վասն միւսանդամ դալստեանն, որ կայ ի կատար յետ պատմադրեանն իտրոսմ (այն է Ս. Ներսիսի)»։ Ս. Ներսիսի կատարեալ պատմութիւնը ոչ Բուզանդին կրնայ բլլալ և ոչ Խորենացոյ, վասնորի ասոնք 1. Ս. Ներսիսի պատմութիւն» չեն. 2. Ձեռք գտնեք անոնց մէջ յիշատակութիւնն իսկ Ս. Ներսիսի մարգարէութեան։ Ուրեմն մեր այս երեք գրութեանց խմբագրողը կը ճանչնայ զՄեսրոբայ Երիցու կատարեալ «Պատմութիւնն Ս. Ներսիսի», որ գրուած է, — հեղինակին իսկ վկայութեան համեմատ, — ՆժԶ թուին¹, Հետեւաբար այս երեք գրութիւնք չեն կրնար նոսն 967 թուին յառաջ գրուած բլլալ։

«Վարք Ս. Ներսիսի» կը ճանչնայ նաեւ Ս. Ներսիսի ընծայուած մարգարէութիւնն՝ Նեւտողաց վրայ, զոր Մեսրոբ Երիցու գրութեան հրատարակելը՝ անախպ կը թողու հնադոյն ձեռագրին մէջ չգտնուելուն համար։ Բայց բարեբաղդաբար կրնանք բնիկ այս մարգարէութիւնը՝ միջոցաւ այն հատակաւորին՝ զոր ի մէջ կը բերէ «Յռչիկը հայրենեաց Հայոց»² և այն քաղածոյին՝ զոր կ'ընէ «Վարք Ս. Ներսիսի»։

Ս. Ներսիսի ընծայուած այս գուշակութիւնը չի կրնար վաւերական բլլալ, և ոչ ալ հոգեւորն ու ճշմարիտ. վասնոր 1. Ձի գտնուիր հնագոյն ձեռագրին մէջ. 2. Մերթ ճիշդ բաներ կ'աւանդէ և մերթ սխալ, բոս որում այս մարգարէութեան կեղծ հեղինակը անցելոյն վրայ կը խօսի կամ ապագային։

Եւ որովհետեւ այս գուշակութեան մէջ յայտնի կերպով կը պատմուին Ալի-Արսլանայ և Մէլիք-Շահի դուրծերը, ինչպէս մասնաւոր իրենէ Հ. Ղ. Վ. Ալիշան³, այս մարգարէութիւնը չի կրնար 1072 թուին յառաջ բլլալ, վասնոր Մէլիք-շահ այս թուին ի գահ ելաւ։ Հետեւաբար մեր այս երեք գրութեանց խմբագրողը ալ, որ այս կեղծ մարգարէութիւնը կը ձեռնարկէ, չի կրնար 1072 թուին յառաջ բրած բլլալ իւր այս խմբագրութիւնը։

Ո՞վ է այս խմբագրողը. — թերեւ Յովհաննէս Սարկաւազ, որ Ս. Լուսաւորէն յետոյ ուղեց անոր տոճմը ներրողել. կիրակոս կ'ընէ իրեն համար. «Գրեաց ճառս . . . ի Տրդատ և ի սուրբ հայրապետն Ներսէս և ի սրանչիւր Սահակ և Մեսրոբ»։ Եթէ այլք այս խօսքին վրայ հիշուած Սարկաւազայ ընծայած են զՊատմադրիս Սահակայ և Մեսրոբայ⁴, նոյն կրնանք այժմ շնչաւ յետ ցուցնելու «Ս. Ներսիսի վարուց» և «Ս. Սահակայ և Մեսրոբայ պատմութեան» հեղինակին նոյն անձն բլլալը և իրենց ձեռք կան երեւոյթը։

1. Սփերք. 2. էջ 158։

2. Բ հատ. էջ 408։

3. Այսպէս մարգարէն կ'ընէ. «Նախ բժշկեցեալ (Ալիքարուան) զմե (= զԿոստանդին Դիոսէն) ի Թագաւորացն Յուսէնի ի սահման Հայոց մեծաւ յաղթութեամբ. . . Եւ յետ այս բռնակալացն նստցի այր խաղաղարար (= Մէլիք-շահ, որ Թագաւորաց 1072-1092)»։

4. Բագմ. 1835 էջ 255։ — Հ. Գարեգ. Զարբ. Հայկ. հին գպր. էջ 594։

2. — Հերքումն Պ. Մ. Ն. Մատի կարծեաց:

«Վրացի Յայտաւորքի մը մէջ, կը պատճառաբանէ Ն. Մատ, (— այսպէս կ'ամփոփեմ Մայիսսահեցի յօդուածը —), Հնդկաստան վկայարանութիւնը կան Հայերէնէ թարգմանուած:

Թարգմանութիւնը պէտք է է դարուն եղած զինչ, վասնզի
1. Կարելի էր որ Վիրք է դարէն յետոյ թարգմանիկն զանոնք, երբ այնչափ կրօնական ատելութիւն ունէին Հայոց դէմ:

2. և այն՝ տոանց ներումն խնդրելու բանաձեւին, հայերէնէ թարգմանելուն համար:

3. և այն՝ եկեղեցական զրքի մը մէջ:

Եւ որովհետեւ այս վկայարանութիւններէն մին, Սոսիալականը, Սթանկան վկայ կը պարունակէ, պէտք է ընդունի թալաթեան (իւր ուրիշ ժամանակ յայտնած կարծեաց հակառակ) կամ «Խորհնացոյց է դարեմ յառաջ ժամօր ըլլալը և կամ Սարիւնկան վեպին Խորհնացիէն հնարուած ըլլալը»:

Պատճառաբանութիւն մը, որ քաղաքական նշմարութեան մը վրայ հիմնուած է, պէտք է առ նուազն յանդուգն կոչուի:

Բայց Ն. Մատի այս փաստը ի նպատակ խորհնացոյց՝ նաեւ կը լքանայ մեր վերը ըրած քննութեամբ:

Իւր գաւած Հնդկաստան վկայարանութեանց մէջ կը գտնուի նաեւ Պատմութիւն զարմին Գրիգորի: Այսպիսի գրութիւն մը, ի Սոսիալ, կրնայ ըլլալ կամ Մետաքսայ Երիցու գործը որ խորագիր ունի «Պատմութիւն զարմին Ս. Գրիգորի Հայոց Լուսաւորչի և պատմութիւն Ս. Ներսիսի», և կամ «Վարք որդւոց և Թոռանց Ս. Գրիգորի»:

Առաջինը չէ վասն զի է դարէն շատ վերջ գրուած է 967ին: Ուստի Պատմութիւն զարմին Գրիգորի բնիւով կ'իմանայ Ն. Մատ զՎարս որդւոց և Թոռանց Ս. Գրիգորի:

Արդ ցցուցինք թէ այս գրութիւնը է դարէն շատ վերջ գրուած է, — վասնզի կ'օրինակէ Յովն. Կարդիկոսէ, և Մեսրոպ Երիցու գործէն, և յետոյս այնպիսի ձեռագրէ մը՝ որ 1072էն յառաջ գրուած չէր կրնար ըլլալ, — հետեւաբար Ն. Մատի վրացերէն Յայտաւորքին վկայարանութիւնը ալ ոչ եթէ է՝ այլ ժիւր դարու մէջ թարգմանուած են և չգործի այն պատճառաբանութիւնը՝ զոր կ'ընէ Պ. Մազ. Գրիգոր թալաթեանցի հակառակ:

Բայց «Ն. Մատի փաստը չգործի թալաթեանի դէմ» խօսքը՝ չկրնար նշանակել նաեւ թէ «թալաթեանի կարծիքը ճիշդ բուրրովին է»:

Ե. Կ. Տ. Ս.



Մ Ո Ւ Ր Ճ



ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ. Ա. Մ. Մ. Մ. Մ. Մ.

Խմբագրութեան եւ մշտական աշխատակիցների նոր կազմով. Խմբագրութեան անդամներն են՝ պ. պ. Լեւոն ՍԱՐԳՍԵԱՆ և Ա. Թ.

Տարեկան գինն է 30 ֆրանկ:

Հասցէ՝ Tiflis, Rédaction de la revue MOURTCH,